ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

« » _____ 2018թ.

N: _____

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16
հեռ. (0312) 3-26-10

ՈՒՂԵՐՁ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Մամուլի բնագավառի հարգելի աշխատակիցներ

Ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները Ձեր մասնագիտական տոնի կապակցությամբ:

Անհերքելի փաստ է, որ մամուլը մեր երկրում կայացած է, որի դերը հասարակական կարծիքի ձևավորման գործում անփոխարինելի է: Հայ մամուլն իր դերակատարությունն է ունեցել և շարունակում է ունենալ նոր Հայաստանի կայացման, մեր պետության ամրապնդման, բարեփոխումների իրականացման, Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման գործում:

Այս տոնը ևս մեկ առիթ է հիշելու և ճիշտ գնահատելու լրագրողական աշխատանքի կարևորությունը և այդ ոլորտի իսկական նվիրյալներին, ցանկանում եմ, որ լրագրողական էթիկայի սահմաններում մեր հասարակությանը մատուցեք անկողմնակալ և ստույգ տեղեկատվություն:

Մամուլի հարգելի աշխատակիցներ՝ օգտվելով առիթից մաղթում եմ Ձեզ ստեղծագործական ու անձնական հաջողություններ, նորանոր ձեռքբերումներ Ձեր դժվարին աշխատանքում:

Կ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ